


ՄԻՔ. ՄԱՆՎԵԼՅԱՆ

ՄԻՔ. ՄԱՆՎԵԼՅԱՆ

ՄԱՍՏՈՒՔՅԱՆ

„Հ Ե Ր Մ Ե Ս“






Մ. Բ. ՄԱՆՎԵԼՅԱՆ

Մ Ի Գ Լ Խ Ա Ր Կ Ի
Պ Ա Տ Մ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Լ. Կ. Լ.
1285



№ 12.

« Հ Ե Ր Մ Ե Ս » Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Չ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Յ Ե Ր Ե Վ Ա Ն 1929.

ՏՊԱՐԱՆ Հ Ե Ր Մ Ե Ս
ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅԱՆ,
ՄԱՐՔՍԻ ՓՈՂ. № 29
ԳՐԱՌԵՊ. № 830բ.
ՏԻՐԱԺ 1000

1.

Վոչ մի գլխարկ, ինչքան ել հնանալու լինի, այնպիսի վողորմելի տեսք չի ընդունի, վորքան կատելով կոչվածը:

Հոբի բերան ընկած, մկան կրծոտած լաթի պես, ծակծկված, յեզրի ժապավենի գույնը դցած, թելերը դուրս թափված, շուրջը քրտինքի և փոշու խառնուրդից մի հաստ կեղտի շերտ:

Այդպես չեն փափուկ գլխարկները: Նրանք ել իհարկե կեղտոտվում, տրորվում, ծակծկվում են, բայց յերբեք այնպիսի խղճալի տեսք չեն ունենում, վորքան կատելով կոչվածները:

Գուցե դա նրանից ե; վոր փափուկ գլխարկները առանձնապես պրետենզիա յել չունեն ելեզանտ լինելու:

Այդ գլխարկը, վորի մասին հիմա պիտի պատմեմ, սրանից տարիներ առաջ, ուրիշ շատ գլխարկների հետ, բերված եր Փարիզից:

Բայց յես վատ սկսեցի պատմությունը:

Խոսել այդ գլխարկի մասին և մոռանալ

Ստեպան Խրիստոֆորովիչին՝ անհնար է, մանավանդ վոր այդ գլխարկը հենց նրանն է:

Մի բան վոր սկզբից չսկսես բան դուրս չի գա:

Փարիզից նա՝ Ստեպան Խրիստոֆորովիչը հետը գլխարկների, կոշիկների, կիսակոշիկների, մետաքս գուլպաների, փողկապների և հագուստեղենի մի այնպիսի հրաշալի գարդերոյ բերեց, վոր աշխարհի ամենահարուստ դերասանի նախանձը կարող էր գրգռել:

Թե ի՞նչու նա Փարիզ դնաց և ինչու վերադարձավ, հերթով կպատմեմ:

— Ի՞նչու դնաց:

— Դէ, ի հարկե, սովորելու:

— Ի՞նչ...

— Այդ արդեն միևնույն է:

Նախ քան Փարիզ ընկնելը նա յերկու տարի թափառեց Գերմանիայի շատ քաղաքներում և Բերլինում մնաց վեց ամիս, իսկ այնուհետև յեղավ գերմանական բոլոր քիչ թե շատ նշանավոր քաղաքներում մի շաքաթից մինչև չորս ամիս: Բերլինից նա յերկու անգամ լուսանկարն ուղարկեց, գույնզգույն ժապավենով զարդարված գլխարկով և նույն գույնի ժապավեն ել կըրծքին: Լուսանկարը գունավոր էր, վոր պարզ լինելին ժապավենի գույները:

Տանը վճռեցին, վոր դա համալսարանի համազգեստ եւ և մայրը ուրախ ուրախ ամենքին ցույց եր տալիս՝ պարծենալով, վոր վորդին արտասահման եւ ուսում առնում:

Իսկ հայրը վոչ հավատում եր նրա մի բան սովորելուն, վոչ ել առանձնապես անհանդստանում:

Թող քեֆ անի քանի ջանել ե, մեկ ե նրանից փիլիսոփա չի դուրս գալու: Աշխարհ թող տեսնի, եստեղ մնալով, պարապ-սաբապ ինչ պետք ե աներ, ենտեղ պարապ ման գալով ել մարդ բան կսովորի,— մտածում եր հայրը:

Այդ եր գլխավոր պատճառը, վոր Ստյոպանին լերեք տարի գիմնազիայի չորրորդ դասարանում նստելուց և մի տարի յեւ փողոցները չափելուց հետո՝ թույլ տվին արտասահման գնալ:

Ինքը Ստյոպան մի քիչ չափազանցած կարծիք ուներ հոր հարստութեան մասին:

— «Ծովից շերեփով շուր վերցնելով, ծովից ինչ կպահասի»:

Նա շատ ուրախացավ, վոր վերջապես ազատվեց գիմնազիայից:

Ճիշտն ասած ուսումը չքավորների համար ե պետք, վոր մի կտոր հաց վաստակեն, իսկ ինքը, փառք աստծո, կարիք չունի. նրա հայրը

այնպիսի հարստութիւնն ե ղիզել, վոր վոչ մի-
այն ինքը այլ մինչև յօթերորդ սերունդն ել
կարող են անհոգ ապրել: Իսկ յերբ Ստյոպան
արտասահման գնալու համաձայնութիւնն ստա-
ցավ, ել քեֆին քեֆ չեր հասնում:

Ի՞նչու թողեց Գերմանիայի համալսարանը
և ինչո՞ւ Փարիզ տեղափոխվեց:

Յեկեք ավելորդ հետաքրքրութիւնն չցու-
ցադրենք: Գնաց, վորովհետև այդպես ուզեց:

Փարիզում նա մնաց ութ տարի. այդ ութ
տարին անցավ ութ որվա նման և նրա հիշողու-
թյան մեջ միշտ ել անջնջելի կմնան:

Նրա մտքովն ել չեր անցնում կովկաս վե-
րադառնալ, բայց մի գեղեցիկ որ՝ հոր մահվան
հեռագիրն ստիպեց նրան հրաժեշտ տալ Փարի-
զին և վերադառնալ հայրենիք՝ ժառանգելու հոր
թողած հարստութիւնը:

Նա համոզված եր, վոր շատ կարճ ժամա-
նակով ե թողնում Փարիզը, յենթադրելով ա-
րագ կերպով կարգի դնել գործերը, մի խոշոր
գումարով կրկին վերադառնալ և անել այն
ամենը, ինչ դեռ հնարավորութիւնն չե ունեցել
անելու հոր ժլատութիւնն պատճառով:

Բայց Ստեպան Խրիստոֆորովիչին վիճակ-
ված չեր կրկին Փարիզ վերադառնալ:

2.

— Փարիզ... Փարիզ...— Զառանցում եր
Ստյոպան:

Որեր, ամիսներն անցնում եյին իրար հե-
տևից, բայց նա դեռ այստեղ եր:

Հոր գործերը նրան չեյին հետաքրքրում:
Նրան ստիպեցին մի քիչ զբաղվել, բայց նա շատ
շուտ ձանձրացավ: Նույնիսկ վիրավորվում եր,
վոր ուղում են իրեն կամերսանտ դարձնել. ինչ
վաճառական է նա:

Շարունակ համոզում եր մորը, վոր ծախ-
ժըխեն ամեն բան և Փարիզ տեղափոխվեն, բայց
մայրը համառում եր և վոչ մի դեպքում չեր
համաձայնվում:

Մայրը, մորաքույրերը, հորաքույրերը աշ-
խատում եյին նրան ամուսնացնել. շատ հա-
ջուստ, գեղեցիկ աղջիկների անուններ եյին
տալիս, հրավերներ սարքում, ծանոթացնում,
կարծելով, վոր գոնե այդպիսով Ստյոպային կը
կապեն տան հետ և այլևս գայլի նման շարու-
նակ դեպի անտառ չի նայի:

Իայց նա լսել անգամ չեր ուզում: Նրա
գլխից դուրս չեյին գալիս Փարիզն ու փարի-
զուհիները:

Հոր գործերը թողնված եյին յերեսի վրա:

Մոր աղաչանքները, ազգականների խորհուրդները մի ականջից ժամուռ, մյուսից դուրս ելին գալիս: Իսկ ինքը մի քանի ընկերների հետ աշխատում եր տանելի դարձնել կյանքն այդ կիսավայրենիների յերկրում:

Մի քանի ընկերների հետ նրան հաջողվեց փարիզյան մի անկյուն ստեղծել:

Շարունակ Փարիզ յերազելով, ինքն ել չի մացավ ինչպես անցավ տռաջին տարին:

Ստեպան Խրիստոֆորովիչը անհաշիվ ծախսում եր, նրանից յետ չեյին մնում քույրերը:

Բոլորն ել մեծ-մեծ շերեփներով առնում եյին մի ծովից, վորն այլևս ներս հոսող գետակներ չունեիր:

Բոլոր գործերը կամաց-կամաց լուծարքի յինթարկվեցին: Կապիտալից ստացված տոկոսները չեյին բավականացնում այդ շուսյլ ծախսերին, այնպես վոր շուտով ձեռնամուխ յեղան մայր գումարին:

Միմիայն մի տարի անցնելուց հետո Ստյոպան հնարավոր համարեց փոխել ցիլինդրը ուրիշ գլխարկների: Յիլինդրից հետո նրա ամենասիրած գլխարկը դարձավ կատելովը: Սև սաթի պես սև, անբիծ, ներսի կողմից նուրբ մի բարակ խողանակ ամբացրած:

Միշտ ելեգանտ, միշտ մաքուր, հպարտ գը-

լուխը բարձր պահած անցնում եր նա փողոցով,
առանց նկատելու չորս կողմը վխտող մարդկանց:
Յեթե վտարով եր, վորը շատ քիչ եր պատահում,
միշտ զգուշանում եր վոր չդիպչեն իրեն:

Յերբ անհնար եր լինում մի վորևե յեր-
կրորդական ծանոթի բարևից խուսափելու ըս-
տիպված եր ձեռք տալ, նա արագ ձեռքը դրք-
պանն եր տանում և աշխատում աննկատելի
կերպով թաշկինակով սրբել ձեռքը: Յերբ դուրս
եր գալիս յուր յերկհարկանի տան պաղլեզդից՝
կառքը միշտ դռան տաջն եր և կառապանը
նրան տեսնելով ձգվում եր տեղում ու առանց
հրամանի սպասելու մտրակում ձիերին:

Կառքի մեջ յերկու ձեռքով հենված արծաթ
կոթով ձեռնափայտին շարունակ աջ ու ձախ
եր նայում տեսնելու համար, թե նայում են
իրեն թե վոչ: Իսկ ինչ շիկ եր նրա բարևելու
ձևը... Արագությամբ ձեռքը տանում եր դեպի
գլխարկը, շապոն աննկատելի վեր եր բարձրաց-
նում և ամբողջ ձեռքի յերկարությամբ մի կողմ
մղում, այնուհետև ճարպիկությամբ, հմուտ
ժոնգլորի պես, իջեցնում գլխին, այնքան վարժ,
վոր ակամա զարմանում ես թե ինչպես ե լի-
նում, վոր վոչ մի անգամ չի սայթաքում և փո-
խանակ գլխին դնելու կառքին չի լսվում կամ
ձեռքից չի ընկնում:

3.

Այն որից, վոր նա վերադարձել եր Փարիզից մինչև 1914 թ. յերեք տարի յեր անցել: Համաշխարհային պատերազմը կարծես հենց նրա համար սկսեցին, վոր Ստեպան Խրիստոֆորովիչի Փարիզ վերադառնալու ծրագիրը վերջնականապես խորտակեն:

Պատերազմը յերկարում եր և քանի վնում ավելի յեր ծավալվում ու ավելի անոելի կերպարանք ընդունում: Բոլոր գուշակութունները՝ պատերազմը շուտ վերջանալու մասին, չճշտվեցին, ընդհակառակը՝ որ-որի վրա ավելի յեր ծավալվում, բորբոքվում ու ել հույս չկար և անհնար եր գուշակել, թե ինչով պետք է վերջանա. արդյոք յերբ, և կգամ մի որ, վոր մարդիկ դադարեն իրար կոտորելուց:

Կյանքը որ-որի վրա թանգանում եր, փողի արժեքը ընկնում:

Ռուսական բանկերում փող ունեցողները աղքատության դռանն էյին կանգնած:

Ստեպան Խրիստոֆորովիչը հուսահատ դրբության մեջ եր, նա զգում եր, վոր այս պատերազմը իրեն շատ ծանր հարված է հասցնելու և վորպեսզի ցրի այդ մռայլ մտքերը իրեն տրվեց քեֆերի:

Մի քանի բարեկամներ ուզեցին նրան յետ պահել այդ կորստաբեր ճանապարհից և աշխատում էին, վոր նա ուշքի գա ու զբաղվի վորևէ գործով:

Աշխատանքի հսկայական ասպարեզ կարգ վորդ ունի, թող ընկերանա մեկի հետ, կապալներ վերցնի:

Այնքան ասացին, համոզեցին, վոր նրա գլուխն էլ մտավ և ընկերացավ մի քանիսի հետ: Դե, դժվար չեր նրան խաբելը, բայց մինչև կը հասկանար, վոր խաբված էր, մեծ գումարներ կորցրեց: Վորոշեց նման հիմարություն չանել այլևս:

Փարիզից բերված գլխարկները կամաց-կամաց խուճանում էին, կորցնում իրենց թաքմությունը. ել այնպես ելեզանա տեսք չունեցին:

Գլխարկների վրա բծեր յերևացին:

Ցիլինդրը, ինչպես մի ավելորդ իր, մի կողմ էր ընկած, տուփը փոշոտած:

Չգեստներն էլ գերծ չմնացին ժամանակի ավերիչ ույժից:

Չգեստների հետ Ստեպան Խրիստոֆորովիչն էլ խուճանում էր:

4.

Յարի և ժամանակավոր կառավարութեան անկումից հետո Ստեպան Խրիստոֆորովիչը չեք հավատում թե բալլշիկները կմնան, թե չե նա վաղուց արդեն արտասահման անցած կլիներ:

Տեսնելով վոր Թիֆլիսի հարուստները փախչում եյին, ինքն ել մի քանի անգամ մտածեց ծախել, ծախծխել ամեն բան, առնել մորն ու քուլբերին և գնալ, բայց այդ փախուստը տրամարություն համարելով՝ վճռեց տեղից չչարժվել ու վալյուտա հավաքել:

Մարդ չկար վոր բան չծախեր, ծախողին ել գնորդ ե պետք, դե ինքն ել կշառնա այդ գնորդը:

Յե՛վ նա տենդային կերպով սկսեց գնել վոսկի, արծաթ, թանկագին քարեր, խալիներ և գլխավորապես նաֆթային արժեթղթեր:

Նրա ձեռքին արդեն այնպիսի վստահելի վալյուտա կար, վոր ամեն ըոպե, յերբ ուզենա կարող ե գնալ:

Իհարկե նա մի ավելորդ ըոպե անգամ չեք մնա, յեթե հավատար, վոր այդ «վանդալները» կգան:

Նա ինքն ել լավ չգիտեր ինչո՞ւ, բայց ասում եք նրանց:

* * *

Լուրերը նրանցից առաջ եյին հասել և նա վախենում սարսափում եր մտածելուց անգամ:

— Իսկապես յեթե գան կացիններով զինված (նա այլ կերպ չեք պատկերացնում բայլշևիկներին): Ամեն ինչ վոտի տակ կոան, կավերեն:

Այնպիսի արտառոց պատկերներ եր ստեղծում նրա Ֆանտազիան, վոր ի՞նչ ասել կուզե, վոր չեք մնա յեթե հավատար, կամ ավելի ճիշտը յեթե այնպես համոզված չլինեք, վոր Դենիկինը, Գուլչակը ժայռի պես կանգնած եյին: Վերջապես գաշնակցականները—նրանց խմբապետները, ամեն մեկը նրանցից մենակ կարող ե դուրս գալ նրանց դեմ, վորոնք դեռ նոր պիտի զենք բռնելու վարժվեն, իսկ հետո՝ Անտանտը... Անտանտը...

Վորքան ել անուելի լինեյին նրա պատկերացրած բայլշևիկները այնուամենայնիվ նա պինդ նստած եր տեղում՝ ամբողջապես ապավինված պանծալի բանակին և Անտանտին...

Նա վալյուտա յեր դիզում:

Նա նույնիսկ ծիծաղում եր այն վախկոտների վրա, վորոնք այնքան անմիտ գտնվեցին,

վոր հավատալով այդ առասպելներին չնչին գը-
ներով ծախում եյին ամեն ինչ և փախչում:

Յեթե պատերազմը մեր պանծալի բանակի
թափը մի քիչ կոտրել ե, դե, բայլշիկները հո
քարից չեն, նրանք ել են հողնել, զգվել: Նրանք
ել ապրել են նույն մահվան սարսափները, կրել
են նույն զրկանքները և դեռ շարունակում են
ու որ-որի վրա վատթարանում ե նրանց դըր-
թյունը:

— Մերկ, քաղցած... Մարդ պետք ե հիմար
լինի, վոր հավատա այդ անմիտ լուրերին, մը-
տածում եր նա և ինքն իրեն խրախուսում:

— Իսկ յեթե գամն...

— Չեն գա, չեն կարող գալ, — պատասխա-
նում եր նա ինքն իրեն, արագ վերցնում գըլ-
խարկը, ձեռնափայտը և իր յերկհարկանի տան
լայն աստիճաններից ցած իջնում քիրժա գնալու:

Ամեն անգամ նա կանգ եր առնում տրյու-
մոյի մոտ: Մի քանի որ շարունակ բարձրաց-
նում եր ձեռքը, վոր սրի բեխի ծայրը, բայց
ժպտալով յետ եր քաշում, հիշելով վոր մի քա-
նի որ առաջ խուզվեցին ամերիկյան ձեռվ:

Հայելու առաջ նայում եր իրեն վոտից
գլուխ, ժպտում ինքնագոհ, ուղղում կատելովը,
ավելի ճիշտ մի քիչ թեքում, վագերի մի փունջ՞

իրբ անփութությամբ՝ թափում ճակատին և
դուրս գալիս փողոց:

Ծ.

Ռուսական բանկերում փող ունեցողները
անանկության դուանն եյին կանգնած:

Ստեպան Խրիստոֆորովիչը գոհ եր, յերջանիկ,
վոր հետևեց իր մի հեռու ազգականի խորհրդին
և նրա ոգնությամբ փրկեց իր հարստությունը:

Նա այժմ իսկական վալյուտա ուներ և վոչ
թե անարժեք թղթի կտորներ: Նրա ինքնահա-
վանությունը, ապլումբը կրկին վերադարձավ:
Նորից ժպտում եր հպարտ:

Վարսավիրները, կառապանները, հյուրա-
նոցի ծառայողները նրան դեռ հեռվից տեսնե-
լով ժպտում եյին: Իսկ յերբ ներս եր մտնում
այնպիսի շտեմնված հարգանք ու սեր եյին
ցուլց տալիս, վոր նա ահամա առատաձեռն եր
դառնում:

Բայց ի՞նչպես յեղավ, վոր այդ իր կարծի-
քով խելոք և հեռատես մարդը այդքան կարճա-
տես գտնվեց:

Բազուն արդեն բայշլեկները գրավել եյին:
Թիֆլիսում մենջերիկյան կառավարությունը
տազնապի մեջ եր, վորպէս ճիշդ էր հուսահատ

Չղաճդումներն եր անուժ տահապանելու այնքան հրապուրիչ իր համար իշխանությունը:

Ստեպան Խրիստոֆորովիչը զգաց իր սխալը, բայց արդեն ուշ եր:

Բոլորը շուկով եյին խոսում իրար հետ: Չորս կողմը սրած ականջներ կային: Յեթե յերկու յերեք մարդ մի բոպե կանգ եյին առնում մայթի վրա, իսկույն մոտենում եր միլիցիոնները և կոպիտ կերպով հրամայում ցրվել:

Բոլորովին անսպասելի կերպով մեկ ել տեսնում եյիր շրջապատված են: Ով անցագիրը չունեք կամ կասկածելի յեր թվում, հավաքում եյին ողակի մեջ և զինվորներով շրջապատված տանում միլիցիասուն:

Վայ թե մեկը բայլըկիկի նման եր ճինում (թե ինչպես պետք ե լինի բայլըկը և թե ինչու յե սա բայլըկիկի նման իրանք ել չգիտեյին): Բավական եր թե մեկը բարձր եր խոսում, կամ ուղղակի դեմքը դուր չեք գալիս՝

— Особый отряд!...

Բայլըկիկները մոտենում եյին Թիֆլիսին: Ժողովուրդը ամեն տեղ ապստամբվել և միանալով կարմիր Բանակին շարժվում եյին դեպի Թիֆլիս:

Քաղաքի ազգաբնակչությունը հազիվ կարողանալով թազցնել ցնծությունը սրտատրոպի ըս-

պասում եր, իսկ հարուստները վախեցած դես ու դեն ելին ընկնում, թագցնում վոսկեղենը, քանկագին քարերը, խալիները...

Թիֆլիսը, վորը պատերազմի ընթացքում զերծ եր մնացել վորևե պատահարից, այսօր նրա գլխին մութ ամպեր ելին կուտակվում և թվում եր թե, քաղաքացիական կռիվներէ նախորդակին ե կանգնած:

Ֆրանսիացիք, անգլիացիք, Անտանտի բոլոր ներկայացուցիչները թողնում ելին քաղաքը և Քաթոլիկ վրայով փախչում:

— Ուրեմն բանը լուրջ ե, վոր Անտանտան ել ե դնում:

Մտածեց Ստեպան Խրիստոֆորովիչը և առաջին անգամ գգաց վախ:

Այնպիսի հուսահատություն պաշարեց նրան, վոր նույնիսկ վոչինչ թվաց այն խոշոր հարստությունը, վոր դիզել եր:

— Հանկարծ կարող են ներս խուժել. կը թալանեն, կավերեն ամեն բան և մերկ ու դատարկ փողոց կշարտեն իրեն ել, մորն ել, քույրերին ել:

Դեռ լավ ե լեթե դրանով բավականանան ու կենդանի թողնեն:

Այն բոլորը՝ ինչ հայրը արյուն քրտինքով, առևտ ու թալանով, շահագործելով ուրիշներին

ձեռք ե բերել տասնյակ տարիների ընթացքում, վոր վորդիքը ապահով ապրեն՝ (նրան ինչ թե հայրը ինչպիսի միջոցներով ե ձեռք բերել) կորչելու վրա յե: Բավական ե, վոր այժմ նրանն ե:

Մայրը, քույրերը, շարունակ կշտամբում եյին, վոր համառոտ ե ժամանակին չգնացին ե մնացին կրակի մեջ:

Քույրերից մեծը տեսնելով անգլիացիների գնալը ապատիտ յեր յեկել վրան, ժամերով նըստում եր ե մի կետի նայում, մեղանխուլիկ եր դարձել, դժվար եր ճանաչել այն ուրախ, անհոգ աղջկանը, վոր բացի հագուստից ուրիշ բանի մասին մտածելու համար յերբեք չի հոգնեցրել ուղեղը:

Անգլիական սպաների գնալուց հետո նրա համար կարծես միևնույն եր, թե ով ե գալիս ե ինչ կլինի...

Իսկ փոքրիկ քույրը ավելի խելացի յեր ե իր գլխի ճարը տեսել եր:

Յերը անգլիացիները գնացին նա յել անհայտացավ: Ամբողջ չորս որ տակն ու վրա արին քաղաքը, բայց չգտան, կորել եր: Հինգերորդ որը նա վերադարձավ ուռած կարմրած աչքերով, ընկավ մոր գիրկը ու լուռ հեծկտաց: Ինչքան աշխատեցին, վոր մի բան իմանան,

չեղավ, լուռ քաշվեց իր սենյակը, ընկավ մահ-
ճակալի վրա, իսկ մոր աղերսանքին սատաս-
խանում եր լացով ու արցունքների միջից մըլու-
կըսալով հեծեծում:

— Թ՛ույն, թ՛ույն տուր մամա... Ձեռ ու-
զում ապրել:

Մեծ քույրը քիչ թե շատ գիտեր ու գու-
շակում եր, վոր փախել եր անգլիացիների հետ,
գիտեր, վոր սիրահարված եր նրանցից մեկի
վրա, իսկ թե ինչու կես ճանապարհից վերա-
դարձավ և այն ել այդ դրության մեջ—հասկա-
նալ չեր կարողանում:

Մի յերկու որ անց, փոքր քույրը մեծ քրո-
ջը լալով, անիծելով պատմեց թե ինչպես այն
սրիկան, վորի համար նա մոռացավ ամեն ինչ,
այնպիսի ստոր կերպով խաբեց նրան:

Յե՛վ նա պատմեց թե ինչպես կայարաննե-
րից մեկում, գնացքը շարժվելու ժամանակ լեռի
վագոճը, վորը հատկացված եր կանանց՝ անգլի-
ական սպաների սիրած աղջիկներին, տեղից չը
շարժվեց ու մնաց կայարանում: Իսկ մյուս վա-
գոնները ադմուկով կպան միմիանց, ցնցվեցին
և սլացան յերկաթի ճանապարհով՝ տանելով ի-
քենց հետ այդ սրամիտ հորինված կոմեդիայի
հեղինակներին... Հանգիստ հոգով, կատակելով
թողին նրանք իրենց սիրած աղջիկներին և գը-

նացին մեկը կնոջ, մյուսը նշանածի, սիրածի մաս դեպի հայրենիք, թողնելով հուսահատությունից, դայրույթից, իստերիկայի մեջ ընկած ժամանցի համար՝ ժամանակով սիրած աղջիկներին:

Այդ վագոնում չորս հոգի էյին, չորս դեռատի, գեղանի, փափկասուն որիորդներ, վորոնք յերկար ժամանակ չէյին հասկանում իրենց գլխի յեկածը, բայց յերբ հասկացան, արդեն ուշ էր՝ լաց, կոծ իստերիկա... Վոչինչ չոգնեց և նրանք տանջված, վոչնչացած կրկին վերադարձան ծնողների տունը:

Այդ դրության մեջ էյին քույրերը. մայրը անոգնական, ճուտերը կորցրած թխականի պես՝ դես ու դեն էր ընկնում աննպատակ և ինքն էլ չգիտեր ինչ անի:

Ստեպան Խրիստոֆորովիչին չէր հետաքրքրում վոչ մոր, վոչ քույրերի այդ վողորմելի, վողորալի դրությունը:

Նա տարված էր մի մտքով, վորն որ ու գիշեր նրան հանգիստ չէր տալիս: Հարստությունը... հարստությունը, բարեկեցիկ կյանքը խուսափում է իրենից, ամեն ինչ անցնելու վրա յե, մրրիկի նման արագությամբ մոտենում է նն նրանք...

Նա կանգնած սենյակի մեջտեղում՝ ինքն իրեն հաշիվ չեր կարողանում տալ, թե ինչպես յեղավ, ինչ եղբացի տվեց գլխին, վոր այդ աստիճան շմեց ու մնաց: Բայց հույսը դեռ չեր կարել, մշուշի միջից մի անհայտ, անորոշ դեմք... Մի ձայն, շնչում եր նրա ականջին:

— Պինդ կաց... Իատարկ բան ե... Ո՛վ կը հանդգնի քո մի մազին դիպչել...

Նա չուում եր աչքերը, լարում տեսողությունը բայց դիմացի հայելու մեջ ինքն իրեն եր տեսնում և կատաղությամբ վեր ցատկում տեղից ու պատե պատ խփվում:

— Անկարելի յե... Անկարելի... Ի՞նչ յեղա՞յ Դենիկինը, ուր կորավ Կոլչակը... Մենչեիկյան բանակը... Հապա դաշնակցականները... Անկարելի յե, անկարելի: Ինչպես կարող եյին նրանք այդպես հիասթափեցնել Ստյոպային, ինչ իրավունք ունեյին նրանք անպաշտպան ժողովուրդը թողնել այս գազանների ձեռքին: Վոչ, վոչ, այստեղ մի բան կա, վոր ինքը չի հասկանում: Գուցե սա մի ծուղակ ե բայլչեիկներին մեջ քաշելու և մինչև վերջին մարդը իրենց արյան ծովում խեղդելու: Չի կարող լինել, վո՞ք բոլորը իրենց գլուխները ազատեն և անպաշտպան ժողովուրդը տան այդ կատաղած գայլերի բերանը:

6.

Զորամասերը ցրվել էին:

Ամբողջ գիշերը քոչում էին:

Տանում էր ով ինչ կարողանում էր թուցնել:
Պահեստները դատարկվել էին:

Ստեպան Խրիստոֆորովիչը այդ գիշեր շո-
քերը չհանեց, չպառկեց, չնստեց. թակարդ՝ ըն-
կած գայլի պես պատից պատ էր խփվում:

Փողոցից նրան հասնող ձայներից վոչինչ
չէր հասկանում, վախենում էր մոտենալ պա-
տուհանին:

— Գուցե բայլշեիկներն են քաղաք մտնում:
Այդ ինչ դղրդյուն է, կարծես ծանր թնդանոթ-
ներ են տանում...

Յերբեմն նրա ականջին հասնում էին ձիե-
րի տրոփյուն... կարծես հազարավոր մարդիկ
են խուճապով անցնում փողոցով... Բայց
ի՞նչու յեն լուռ, մարդկային ձայներ չեն լըս-
վում...

Լույսն սկսեց բացվել:

Դրսից լսվող ձայները հետզհետե մեղմա-
ցան և քիչ անց դադարեցին:

— Ի՞նչ կատարվեց այս գիշերվա մեջ:
Մըդյո՞ք բայլշեիկները քաղաք մտան, թե մեն-
շեիկյան զորքերը թողին քաղաքը... Գուցե դե-

պի դիրքերը գնացին... Գուցե շուտով կլսվի
թնդանոթների, գնդակացիրների ձայները...
Գուցե դեռ հաղթեն ու թույլ չտան քաղաք
մտնելու:

Նա մտտեցավ պատուհանին և փեղկը կի-
սաբանալով սկսեց ճեղքից դիտել փողոցը:

Լուռ է:

Վոչ մի արտասովոր բան, կարծես բոլորը
յերազուամբ լինեք տեսած:

Հացթուխի խանութի առաջ, ըստ սովորա-
կանի, հերթի յեն կանգնել մարդ, կին, մեծ,
փոքր...

— Խելագարվել են ի՞նչ է... մտածեց նա
բարկացած:

— Ինչո՞ւ չեն փախչում, թագնվում... Յե-
քեի վոչինչ էլ չկա, իրեն թվացել է. հալյու-
ցինացիա՝ թե չե այդ մարդիկ ինչո՞ւ յեն այդ-
պես հանգիստ կանգնել հացի խանութի առաջ
և հերթի սպասում, ամեն որվա պես... Կարծես
վոչինչ չի պատահել, բան չի փոխվել: Գուցե
դեռ քաղաք չհասած պարտվել ու յետ են մղո-
վել... Լավ, բայց ովքեր էյին ամբողջ գիշերը
աֆյուսի խուճապով փախչում... Յերեի դեռ
քաղաք չեն մտել... Բայց չե վոր ամեն ըոպե
կարող են... Ինչո՞ւ յեն այդ անմիտները . այդ-
պես անտարբեր կանգնել և սպասում մի կտոր

ցելի նման հացի, միթե միևնույն չե թե մեռ-
նելուց առաջ ստամոքսում մի կտոր հաց կլինի
թե չե...

Մի վայրկյան նա մտածեց բանալ պատու-
հանը և ամբողջ ձայնով ճշար.

— Փախե՛ք, ի՞նչ եք կանգնել... Բայլ շերիկ-
ները...

Բայց իսկույն ուշքի յեկավ, թողեց պա-
տուհանի փեղկը կիսաբաց և թուլացած ընկավ
մոտիկ մի աթոռի վրա: Անքնությունից, կոն-
յակից և նյարդային անցկացրած գիշերից հետո
գիակի պես դժգույն եր:

Պատուհանի ճեղքից լույսի մի շերտ ընկել
եր նրա վրա, նա փակեց աչքերը արևի լույսից,
նրան խանգարում եր այդ լույսը:

Յերկար նա մնաց այդ գրության մեջ:

Հանկարծ նա հիշեց փողոցի հացի հերթի
սպասող մարդկանց և մի ակնթարթում մահը
կարծես հեռացավ նրանից:

— Սուտ ե... Առասպել... ի՞նչ կացին, ի՞նչ
բան... Նրանք ել մարդիկ են չե...

Այդ բոլորին արտասուքն աչքերին ներս
մտավ մայրը, հուզմունքից դողալով, արտա-
սուքների միջից շշնջաց.

Մերոնք փախան: Նրանք արդեն քաղաք են

մտել: Դաշան փողոցից յեկավ, տեսել է նրանց-
Դաշան ասում է կացիներ չունեն:

Մենչևիկները հտնձնել են քաղաքը առանց
կռվի: Ճանապարհին բոլոր գյուղերի գյուղացիու-
թյունը ապստամբվել և միացել են կարմիրնե-
րին, և կարմիր դրոշակներով քաղաք են մտել:

Նայիր, վրացիներ ել կան կարմիր բանա-
կայինների մեջ, բոլորը ուրախ են՝ ժպտադեմ,
կարծես տոն լինի: Չեմ հասկանում, չեմ հաս-
կանում. եղ Դաշան ել աչքիս ուրիշ տեսակ է
յերևում, նրանից պետք է զգույշ լինել: Վեր
կաց, վեր կաց գնանք մի ճար անենք, պետք է
թազցնել:

Հիպնոսվածի նման կանգնել եր նա ան-
շարժ աչքերը հառած մի կետի:

— Բայլշևիկները յեկան...

— Կացիներով... Մկսել են...

— Դաշան ասում է կացին չունեն: Յերե-
վանյան հրապարակում նստած հանգստանում
են, ժողովուրդը շրջապատել է նրանց, հարց ու
փորձ են անում, ծխախոտով հյուրասիրում:
Ճառեր են ասում... Ուրախանում... Կարծես
տոն լինի... Վեր կաց, վեր կաց գնանք մի ճար
անենք... Պետք է թազցնել:

Ստյոպան լուռ, ապուշ կտրած՝ մորն եք
նայում: Մայրը բռնեց նրա թևից ու ցնցեց:

— Ստյոպան...

Նա վախեցած ցնցվեց, ուշքի գալով այս
ու այն կողմ նայեց և հագիլ կարողացավ «մա-
մա» արտասանել ու ընկավ նրա գիրկը:

— Հանգստացիր, հանգստացիր, ուշքի յեկ,
ձեռքերը ծալած նստելով բան չի դուրս գա,
վեր կաց գնանք: Ել պրծավ, մնացինք, գոնե
աշխատենք, վոր եդ անասավածները մեզ քաղ-
ցած չթողնեն, վեր կաց տանենք յեղած-չեղածը
թագցնենք... Դաշային ել տնից ուղարկել եմ...
նա աչքիս մի տեսակ ե յերևում, նրան շատ ել
չի կարելի վատահել:

Ստեպան Խրիստոֆորովիչի բոլոր հույսերը,
ծրագրները ողբ ցնդեցին, գուշակութունները
սխալ դուրս յեկան և նա կանգնած եք կատար-
ված փաստի առաջ:

Նրանք արդեն քաղաքումն են:

Նա կորցրել եր իրան: Այնպիսի դատար-
կություն եր տիրում գլխում, վոր անկարող եք
ինքնուրույն մի քայլ անել:

Մոր խոսքերը նեկտարի պես ազդեցին նրա
նյարդերի վրա. հույսի նման մի բան շողաց-
կարծես, դեռ ամեն բան կորած չեր: Ծիծաղեց
անմիտ, նյարդային կարճ ծիծաղով և գոռաց

այնքան բարձր, վոր կարծես դիմացինը խուլ էր։
 — Մամա... Միթե դեռ կարելի յե։ Բայց
 ի՞նչպես, վորտեղ...

— Դու յեկ, յես գիտեմ։

Նրանք իջան ներքնահարկի կիսամութ մա-
 ռանները։ Մայրը գրպանից մի մսմ հանեց, վա-
 ռեց ու տվեց Ստյոպայի ձեռքը, իսկ ինքը մո-
 տեցավ պատի տակ կիտված անպետքացած
 կահ-կարասիների արկղներին, տախտակի կտոր-
 ների կույտին և կանգ առավ։

— Այս բոլորը պետք է մի կողմ քաշել,
 մոմը մի տեղ ամբացրու։

Ստյոպան անշարժ կանգնած նացում էր
 մորը և աչքերը ճպճպացնում։

Մայրը հետ քաշեց թևերը և արագությամբ
 սկսեց պատի տակից քաշքշել իրերը։

— Մոմը մի տեղ ամբացրու և ոգնիք սե-
 ղանը մի կողմ քաշենք։

Նրանք յերկուսով նյարդային արագու-
 թյամբ սկսեցին դես ու դեն հրել, քաշել պատի
 տակ թափված իրերը։ Շուտով բացվեց մի ծակ,
 վորտեղից հազիվ կարող էր մի մարդ անցնել։

Մի վայրկյան յերկուսն էլ հոգնած կանգ
 առան։

— Ահա...

— Մամա, փրկված ենք,— ճչաց Ստյոպան,

դրկելով մօրը, պինդ-պինդ համբուրեց, բաց թողեց նրան, վազեց դեպի նոր բացված ծակը, այնտեղից ել իրերին խփելով արագութեամբ հարձակվեց մօմի վրա և մօմը ձեռքին գլուխը ներս կոխեց:

Նրա աչքերի առաջ բացվեց մի փոքրիկ խցիկ լուսավորված չգիտեմ վորտեղից:

Նա ներս մտավ խուցը, յերկու վայրկյան անց դուրս յեկավ բոլորովին կերպարանափոխված, վոչ մի նմանութուն քիչ առաջ ծակը մտնող վախից գունատ Ստյոպայի հետ. դեմքը փայլում էր ուրախութունից:

— Մամա... մամա... Փրկվեցինք... Հա, հա, հա... Դե հիմա թող գան:

Նրանք յերկուսով սկսեցին վերևից բերել թանկագին իրերը, փոքրիկ յերկու սնդուկ թանկագին քարերով և նույնքան թանկագին թղթերով:

Յերբ ամեն բան պատրաստ էր, աղյուսներով ծածկեցին ծակի բերանը: Զգուշութեամբ, վոր վոչ վոք չտեսնի, մի դույլ ջուր քարշ ավին, ձեռքով տեղն ու տեղը գետինը քանդեցին և ցեխ շաղախեցին: Ստյոպան առաջին անգամ կյանքում բախտի քմահաճույքով սև աշխատանք էր կատարում, նա այնպես էր տարվել այդ գործով, այնպիսի վողկորութեամբ

եր աշխատում, վոր չեր ել նկատել թե զգեստները ցեխոտվել, փոշոտվել են: Ինչքան աշխատում եր վեր քաշել թեքերը, բայց ի գուր՝ ըսպիտակ քաթանի մանժետները ցեխոտվել եյին, նա յերկու ծնկների վրա չոքած՝ ձեռներով, յեղունգներով քանդում եր հողը և լցնում փոսը, ուր ցեխը թանձրանում եր: Նա ինքնամոռացության մեջ եր. յեթե նա մի րոպե ուշքի գաք անշուշտ շատ պիտի զարմանար և չհավատար, վոր դա ինքն ե ամբողջապես ցեխում շաղախված: Յե՛վ լավ եր, վոր այդ ինքնամոռացումը յերկար տևեց:

Մոր կարգադրությամբ, պատը վերջացնելուց հետո, նրանք սկսեցին արկղների միջից դուրս տալ տաշեղներ, թղթեր, տախտակի կտորներ կիտեցին նոր սվաղած պատի տակ և մոմը շրին տակը:

Մտյոպան կարմրած խարույկի բոցերից, աչքերը ծխից արցունքով լցված, հրճվանքով նայում եր խարույկին:

Մայրը մի յերկար ձողով բորբոքում եր կրակը:

Մտյոպան հիացմունքով նայում եր մորը՝ ծխից ծամածուած մի ժպիտ դեմքին:

— Մամա, ինչ հնարագետն ես, մամա շան յեկ համբուրեմ...

— Կանց, կանց Ստյոպա, դրա ժամանակը չե՞
Պատը բոլորովին չորացավ և սևացավ ծխից՝
Թագցնելով կեղծիքը:

Ստյոպան կարծես թե ավարտեց գործը,
բայց մայրը դուլլի միջի ջուրը սրսկեց հանգ-
չող մոխիրի վրա և, դուլլը Ստյոպային տալով,
ասաց.

— Ելի ջուր բեր... Զգուշ, Դաշան չտեսնի:

Ստյոպան մի քուպե ապուշ կտրած նայեց
մարը, կարծես զարմանալով մոք այդ անհեթեթ
պահանջի վրա, բայց խկույն անդրադառնալով
մոմենտի լրջությանը, արագ, դուլլը ձեռին դուրս
վազեց:

Ստյոպան հեալով բերեց ջուրը, մայրը
լցրեց մոխիրի վրա և վոտներով կոխկրտեց ա-
պահովելով հրդեհից:

Ստյոպան հանգիստ շունչ քաշեց:

Բայց գուր, դեռ ամեն բան վերջացած չեր՝
Մայրն ասաց, վոր իրերը կրկին պետք է քարշ
տալ նախկին տեղը:

Մի քանի ժամվա մեջ նրանք փրկեցին
իրենց հարստությունը մոտեցող վտանգից:

Այժմ գործը կատարված էր, պետք եր
դուրս գալ, բայց այնպես, վոր մարդ չտեսներ,
կոսկածելի չերևային: Դրա համար ել վորքան
հնարավոր եր մաքրեցին փողին, ցեխը, մի քիչ

կարգի բերին իրար և անվրդով տեսք ընդունելով՝ լուռ դուրս յեկան նկուղից: Գողի պես դես ու դեն նայելով բարձրացան իրենց սենյակները, հազիվ կարողանալով թագցնել ներքին հուզմունքը, վոր յեռացող ինքնայեռի նման փոթորկվում, հուզվում և ուզում եր դուրս ժայթքել իր բնից:

7.

Թե ինչպես յեղավ, վոր արտասահման չը գնաց. ինչպես յեղավ, վոր բանկում փողերը անարժեք դարձան, ինչպես և վնասեղ թագցրեց հարստոթյունը:

Դուք այդ բոլորը գիտեք, բայց դուք դեռ չգիտեք թե ինչ յեղավ հետո, յերբ նա արդեն փրկված եր համարում հարստությունը, հետևապես և իրեն:

Թանգարժեք իրերը նկուղում թագցնելուց հետո, նա իրեն բավականին հանգիստ եր զգում, ել այնպես չեր վախենում բայլըկիկներից, մանավանդ յերբ լսեց, վոր կացին ել չունեն:

Անցավ բայլըկիկների գալու առաջին որը, յերկրորդ որը, վոչինչ, վոչ մի փոփոխություն. կարծես մոռացել եյին նրան և նա որ որի վրաս ավելի յեր սրտապնդվում:

Այդ յերեք որը նա տնից դուրս չեկավ,

պատուհանների փեղկերն ել թույլ չտվեց բանալ:

Առաջին յերկու որը ամեն մի թխկոցից նա ցնցվում եր, տեղից վեր ցատկում և զարհուրած շուրջը նայում: Նրան թվում եր թե ահա ներս կթափվեն կացիներով և վոչ աղաչանք, վոչ արտասուք չեն կարող փափկեցնել նրանց սիրտը: Ուշք չեն դարձնիլ, վոր նա ծընկաչոք աղերսում ե, վոր խնայեն կյանքը, վերցնեն ինչ ուզում են, բայց կյանքը խնայեն, իսկ յեթե մահը արդեն անդառնալի կերպով վճռված ե, գեթ խնայեն և սպանեն, բայց վոչ կացինով... Ինքը հո մսացու չե՞, փայտ չե, վոր կացինով են ուզում ջարդատել:

Այդ տագնապալի դրու թյունը անցել և տեղի յեր տվել մի անորոշ, ապատիկ տրամադրութեյան:

Շատ եր դարմանում, վոր ախճան ուշանում են, վոր դեռ կենդանի յե և նույնիսկ ըսկըսեց կասկածել, թե գուցե սուտ ե և չեն յեկել: Կամ գուցե լուրերն են սուտ, չափազանցքած, վորը տարածել են մենշկիկները:

Ախր նրանք մարդ են չե... Ինչո՞ւ, ինչո՞ւ պետք ե այդքան վայրագ լինեն, այդքան դաժան և անողոր:

— Ի հարկե սուտ ե... Բոլորն ել հնարովի,

ասրքովի բաներ են: Գուցե դեռ նրանց որով
ավելի լավ լինի:

Մենախոսում եր նա ինքն իրեն հույսեր
ներշնչելով. տրամադրութունն ել աստիճանա-
բար փոխվում եր դեպի լավը: Նրա դեմքի վրա
ժպիտ յերևաց: Սեղանի վրայից մի սիգար
վերցրեց, ատամներովը կծեց ծայրը և լեզվի
ոգնութեամբ մի կողմ նետեց: Վառեց: Սիգարի
անուշ բուրմունքը նրան քանի որ ե այդքան
դուրեկան չեր թվացել:

Այս մի քանի որում Ստյոպան նիհարել
եր, գունատվել: Բայլշիկներին և մահվան ըս-
պասելով՝ նա վորպետովի ավելի համարձակ դի-
մավորի մահվան՝ անվերջ խմում եր, վոր հար-
բի և չզգա մահվան սարսափը: Կոնյակի շշերը
մի տողան կազմած, զինվորների նման շարված
են սեղանի վրա:

Նա շշում եր կոնյակից, քնում, բայց
հարբել չեր կարողանում:

Սիգարը ձեռքին նա մի քանի անգամ ան-
ցավ սենյակի յերկարութեամբ, բոլորովին մե-
քենաբար կանգ առավ գարդեցոքի առջև: Պա-
հարանի դռան վրա փակցրած հայելու մեջ ինքն
իրեն չճանաչեց, այնքան անձանոթ թվաց նրան
իր սեփական դիմագծերը. մի քանի վայրկյան
նայեց հայելու մեջ: «Միթե սա յես եմ», մտա-

ծեց նա զարմացած. գլխի մազերը գզգզված, առանց փողկապի, աչքերը ուռած...

Քայց դա միայն մի բոպե տևեց, ձեռքով մի շարժում արավ, ցնցեց գլուխը և սթափվեց. հիշեց, վոր յերկու որ ե չի լվացվել, չի սանըրվել, չի ասիլվել, ապա վճռական շարժումով բացեց պահարանի դուռը և ելի մնաց անշարժ։

Ամեն բան իր տեղումն եր։

Ահա Ֆրակը, սմոկինգը, վիզիտկան, գունավոր վիզիտկան ֆանտեզի անթևները, կոստյումներ՝ զանազան գույնի, բոլորն ել այնպես ուրախ, տոնական տեսք ունեն, վոր նրան թվաց թե այդ անշունչ զգեստները ծիծաղում են, ծաղրում են իրեն, այդքան վախկոտության համար։

— Արդյոք վիճակված ե նորից հագնել, անցավ նրա մտքով և քիչ մնաց լար, աչքերը շրակալեցին, թախիժն իջավ հոգու վրա։

Նա փակեց պահարանի դուռը, մոտեցավ պատուհանին, վորի ճեղքից արևի մի շող ընկել եր գահավորակի վրա և նստեց։

Նա առաջին անգամ այդ յերեք որվա մեջ հիշեց մորն ու քույրերին, վորոնք աննկարագրելի տխրության մեջ եյին և նա անկարող եր մխիթարական մի խոսք գտնել նրանց հա-

մար, վորովհետև ինքը նրանցից պակաս չեր քնկճկած, ինչ անել, վոր նա տղամարդ է:

Նա մեկ մտածեց վեր կենալ գնալ նրանց մոտ և փորձել մի քիչ սիրտ տալ, բայց տեղից չշարժվեց և ծխացող սիգարը պինդ-պինդ սըղմած բուժ և ցուցամատների արանքում, յերկար մնաց այդ դրության մեջ:

8.

Վերջապես յեղավ այն, ինչից նա այնպես սարսափում էր և ամեն վարկյան սպասում:

Յեկան բայլը կենները:

Չորս հոգի եյին թե հինգ, թե յոթ նա չեր կարող ճիշտն ասել: Նա նայում էր և չեր տեսնում: Նրա վախից չուած աչքերի բիբերը սառել էյին մի կետի: Չգիտեր հավատար իր աչքերին թե չէ: Վոչ մեկի ձեռքին կացին չկար... Գուցե թազցրել են... Վոչ, չկա... Գուցե կացնավորները յետևից են գալիս, սպասում են մյուս սենյակում, վոր առաջին նշանին վրա տան և կոտորեն:

Անցավ մի քանի վարկյան հավիտենականության պես ծանր ու յերկար:

Սոյոպայի աչքի առջև կանգնած էյին մի քանի զինվորական զգեստներով մարդիկ, նրանցից միայն մեկի հագին կաշվե բաճկոն կար:

Բոլորն ել Ստյոպային այնքան սիրալիբ թվացին:

Տեսնելով նրանց, նա մի քիչ սիրտ առավ, բայց յերկար չսուեց: Նրա դողը կրկին բռնեց, յերբ նրան շատ քաղաքավարի հայտնեցին, վոր պետք է դատարկեն տունը՝ հետներն առնելով անհրաժեշտ և այն ել վորոշ քանակութեամբ իրերն ու սպիտակեղեն և քաշվեն բակի մյուս ծայրին առանձնացած միհարկանի տնակը, յերկու սենյակով և դոմով:

— Ի՞նչպես ապրել տյն սենյակներում, ուր մի ժամանակ սեփական կառասպանի ընտանիքն էր ապրում, հետո յել ծառաները: Ինքը, մայրը, քույրերը այդ յերկու խցիկի մեջ... Դա անհնար է, ի՞նչպես կարող են նրանք տեղավորվել... Լավ, մեկը Ստյոպային, մեկը մորը, հապա քույրերը, սեղանատուն, հյուրասենյակ... Լավ, հյուրասենյակ պետք չէ, սեղանատուն հո՞ անհրաժեշտ է, հո՞ չեն կարող ննջարանում ճաշել...

Ստեպան Խրիստոֆորովիչը կանգնել էր լուռ, գունատ և աչքերն էր ճպճապացնում ու ակամա ժպտում:

Բոլորը ինչ հասնում էին նրա լսողութեանը այնքան անհեթեթ, այնքան անհասակա՛նալի էին թվում իրեն, վոր դժվարանում էր

ըմբռնել, թե ի՞նչ են պահանջում իրենից... Ձի կարող պատահել, վոր լսածը լուրջ մի բան լինի: Յեթե տեղն ու տեղը սպանելին իրեն ել, մորն ել, քույրերին ել, նա այդ բոլորը կհամարեր շատ բնական, նույնիսկ նա անբնական եր համարում այն, վոր տեսնում, լսում, շնչում եր: Իսկ այդ պահանջն ի հարկե կատակ ե, նըրանք չեն կարող այդպիսի անհեթեթ բան պահանջել:

Նա մի քանի անգամ գույնը փոխեց, այդ մի քանի ըոպեները նա այնքան շատ մալրեց, վոր զարմանալի չեր լինի յեթե սև սաթի պես մազերը միանգամից սալիտակելին, բայց այդպիսի բան չպատահեց:

Նա մեկ մտածեց ծունկ չոքել նրանց առջև, աղերսել, վոր խնայեն կյանքը, վոր ամեն բան տանեն, բայց իրենց ձեռք չտան: Մեկ ել խրախուսվելով նրանց քաղաքավարի, մեղմ տոնից ուզում եր գոռալ, հրամայել, վոր թողնեն իրենց հանգիստ և հեռանան:

Շատ բան եր ուզում ասել, անել բայց լեզուն կապ եր ընկել, վոչինչ չեր կարողանում ասել, նույնիսկ տեղից շարժվել:

Մայրը փորձեց խնդրել, մեծ քույրը լալով ընկած եր բազկաթոռի վրա, գլուխն ել չեր բարձրացնում:

Միայն փոքրիկ քույրը քաջ գտնվեց և համարձակ մոտենալով կաշվե բաճկոն հագած յերիտասարդին, մի քիչ գունատ, հուզմունքից դողացող ձայնով նայելով ուղիղ նրա աչքերին ասաց.

— Ձեր մանդատը...

— Խնդրեմ... Ձեր տունը վերցվում ե հիմնարկության համար. յերկու ժամից պետք ե հեռանաք:

— Ի՞նչ կարող ենք առնել հետներս:

Կաշե բաճկոնով մարդն սկսեց թվել:

Մինչ նա թվում եր, աղջիկը աստիճանաբար ոետինի փշած փուչիկի նման կուչ եր գալիս, մինչև ճմշկած ընկավ աթոռի վրա և գլուխը անոգնական կախ ընկավ ուսի վրա:

Սկսվեց լաց, աղաչանք, բայց վոչինչ չոգնեց, հրամանը այնքան կտրուկ եր, վոր բոլորն ել զգացին, թե զուր կլինի ամեն բան. նրանց վորոշումը անդառնալի յե:

Սոյոպան սկսեց հասկանալ թե ի՞նչ են ուզում և ուրախութիւնից պատրաստ եր հիստերիկ կերպով լալ, ծիծաղել, վոր չեն մորթում, բայց հանկարծ կայծակնահար յեղածի պես արձանացավ: Այդ մտքից նա այնպես սոսկաց, վոր մա՜ր վոչինչ թվաց նրան... Ավելի լավ ե թող սպանեն, թեկուզ կացիններով... Ի՞նչպես

նա կարող ե թողնել այն տունը, վորտեղ թաղ-
ված ե նրա ելությունը, ճողին, ինչին ե պետք
կյանքը այնուհետև: Յեթե մի անգամ հեռանա
յել, նրան սիլ թույլ կտա նկուղ մտնել:

Նրա գլուխը պտտվեց, աչքերը սևացան և
ընկավ դահավորակի վրա:

9.

Իմ նպատակս չե քայլ առ քայլ հետևել
Ստեպան Խրիստոֆորովիչին և պատմել թե ինչ-
պես նա հասավ այս կետին: Այնքանը կասեմ,
վոր մայրը յերկու տարի անց մեռավ, մեծ քը-
րոջն հաջողվեց հենց իրենց տան մեջ յեղած
հիմնարկում մի փոքրիկ պաշտոնի մտնել: Փոքր
քույրն անգլիացիների հետ պատահած դեպքից
հետո, թեև նրանց ել ատում եր, բայց ելի չեր
կարողանում հաշտվել, վոր ինքը կարող ե ծա-
ռայության մտնել բայլընկիկների մոտ... Վոչ,
նա այդ յերբեք չի անի, թեկուզ քաղցած մեռնի:

Բայց շատ տարորինակ եր, վոր մի քանի
ամիս անց սիրահարվեց և ամուսնացավ նրան-
ցից մեկի հետ: Բայց ամուսնությունից յոթ
ամիս անցած անուսնուն դատի տվին և յերեք
տարվա բանտարկության մատնեցին:

Ստեպան Խրիստոֆորովիչը այնպես եր
փոքրացել ու խեղճացել:

Բայց քրոջ ամուսնանալը կոմունիստի հետ նրան մի քիչ խրախուսեց: Գուցե հաջողվի նրա միջոցով մի կերպ մտնել նկուղը: Բայց դեռ սիրտ չեք անում փեսային հայտնել զաղտնիքը, ով գիտե ինչ մարդ ե, դեռ թող մնա:

Փեսայի միջոցով մի պաշտոն հաջողեցրեց, բայց մի յերկու շաբաթից հետո նրան կրճատեցին՝ տեսնելով նրա միանգամայն անպեք լինելը:

Մի քանի պաշտոն փոխեց: Մեկն տեղից մի քանի ուր, շաբաթ պահելուց հետո՝ հեռացնում եյին:

Ինքը՝ Ստյոպան չեք զարմանում, վոր ավելի յերկար չեն պահում ծառայության մեջ: Նա սովոր չեք վոչ մտավոր և վոչ ել Ֆիզիքական աշխատանքի: Նա այնպես չեք կրթված, դաստիարակված... Ա՛յ, յեթե մի հարմար պաշտոն լիներ՝ որինակ բանկի դիրեկտոր, վորը միմիայն ստորագրում ե իրեն ներկայացրած թրղթերը, այդ արդեն ուրիշ բան կլիներ:

Բայց այդպիսի չնչին աշխատանքների համար չեք նա կրթվել:

Մեծ նավին մեծ ծով, իսկ նրան սղմել եյին այդ տաշաի մեջ թե լողա:

Առանց փողի, առանց միջոցների նա իրեն մարդ ել չեք համարում: Նա դժբախտ եր և որ

որի վրա ավելի յեր խեղճանում, բայց յեթե հուսահատությունից ինքնասպանության շեր դիմում դրա պատճառը նկուղում թագցրած հարստությունն եր, վոր մտածում եր փեսայի միջոցով հանել և արտասահման փախչել:

Իե, դա յել այդպես յեղավ, խեղճին զուր տեղը բանտարկեցին:

Փեսային պատահած դժբախտությունից հետո նա յերագում հաճախ տեսնում եր, վոր բայլշիկները փախել են, նա նորից տան տեր ե, քանդում ե պատը և նկուղում ամեն ինչ վոր թագցրած եր փոխվել ե ադամանդների, վոսկու, նա բռերով վերցնում եր և կրկին փայլուն վոսկիները անուշ զնգալով թափվում եր յին. վոսկեկույտի վրա հարյուրավոր, հազարավոր Նիկոլայի գլուխներ դիզված եյին իրար վրա: Իսկ յերը քնից զարթնում եր՝ նորից տեղի յեր տալիս հուսահատության: Նա ամբողջ գիշերները անց եր կացնում անքուն, հուսահատ ջղաձգումների մեջ: Բայց այդ յերագները այնքան, այնքան հեռու եյին նրանից:

Հո մի որ կգա այդ որը, հո նրանք հավիտյան չեն մնալու: Մի ամիս, յերկու ամիս, վերջապես մի տարի և կգա փրկության ժամն ու նա կրկին յերջանիկ կլինի, նորից ուրախ... Մտածում եր նա, բայց ահա յերբորդ տարին ե

սահում՝ նրանք պինդ-պինդ նստել են և չեն ել մտածում զնալ, իսկ դրսից ոգնության հույս չկա, բոլորը սատկոտել են և նա զայրույթից թքում եր նրանց հասցեյին, վոր այնքան ուշանում եյին:

Նա բոլորովին խուճացել եր:

Ինքն ել չեր հարգում իրեն, ուր մնաց ուրիշներէց հարգանք սպասեր: Առանց փողի ինչ ե մարդը... Վոչինչ, և մեծ զերո: Առանց փողի նա կորցրել եր մարդկային կերպարանքը, արժանապատվության զգացմունքը միանգամայն մեռել: Նա այլևս չեր քաշվում նստել կափենեքում և սպասել, վոր մեկն ու մեկը մի բաժակ սուրճով կամ թեյով հյուրասիրի: Ճաշի ժամանակ զնում եր ռեսուրան, նստում ազատ սեղանի առաջ և դարան մտած կատվի պես նայում մուտքին՝ և յերբ ծանոթ եր նկատում աչքերով հետևում եր մինչև նա սեղան կընստեր ու իսկույն ուղղում եր ճմրտված կատելոկը, վողորմելի ժպիտը դեմքին՝ մոտենում, նստում եր և մտերմաբար թեքվում ու կամացուկ փրսփրսում:

— Կարո՞ղ եք ինձ այսօր ճաշով հյուրասիրել, պարտքի տակ չեմ մնա:

Ճաշի վերջումն ել յերկու-յերեք ռուբլի

վորս եր առնում, շնորհակալություն հայտնում,
կրկին ու կրկին հավատացնելով, վոր շուտով
կըվճարի, արագ վերցնում կատելոկը և մի տեղ,
մի ուրիշ նպատակի դիմող մարդու պես արագ-
դուրս գնում ճաշարանից:

10.

Շքեղ ապրած, կյանքում յերբեք կարիք
չզգացած—նա չի իմացել թե ի՞նչ է նշանակում
մի բան ուղենալ և չկարողանալ առնել:

Նա շուայլ է առանց մի վարկյան կանգ
առնելու, մտածելու թե վճրտեղից է, ի՞նչ մի-
ջոցներով է հայրը այդքան հարստությունը դի-
ղել: Վորքան մարդկանց արյուն քրտինով են
կիտված այդ փողերը, վոր նա այնպիսի գյու-
րությամբ աղբի պես շարդում եր՝ խաղաթղթի,
կանանց վրա, դարդիմանդ ընկերների հետ:

Նա դեռ հույսը չեր կտրում, դեռ հավա-
տում եր, վոր դալու յե փրկության ժամը և
նա խունանում եր, բայց չեր հուսահատվում:

Նրան մի որ հաջողվեց մտնել նկուղը, և
ուրախությունից քիչ մնաց մատներ սրբազան
գաղտնիքը: Թագստատեղին գերծ եր մնացել
բայլեկների խուզարկու աչքերից և համոզված,

վոր մի որ ձեռք կձգի, հողու խորքում ժպտում
եր ու սպասում նրանց գնալուն:

Մենշեկիկների ժամանակ, ճիշտ է, այն չէր
ինչ ցարի, բայց ելի փառք եր, իսկ այս «ան-
պիտանների» որով, ամեն մի չափ անցավ:

Արդեն յոթ տարի յե անցել բայլը կիկները
չգնացին և Ստեպան Խրիստոֆորովին այլևս
չեք հավատում նրանց գնալուն...

Յե՛վ նա հաշտվել եք իր ճակատագրի հետ:
Այլևս նա նման չեք նախկին Ստյոպային.
Սուր մնաց նրա շիկը, նրա գոռոզությունը, այն
Ստյոպային, վորի համար մյուս մարդիկ մեղ-
ներ եյին, վոր վխտում եյին նրա վտաների տակ
և նա կարող եք իր քմահաճույքի համար կոխ-
կրուտել վոչնչացնել նրանց:

Ստեպան Խրիստոֆորովիչը այնպիսի վո-
ղորմելի տեսք եք ընդունել՝ այլևս վոչ մի նմա-
նություն նախկին Ստյոպային. նա՛ վոր առաջ
վախենում եք դիպչել մեկին վոր չկեղտոտվի,
այժմ այնպես եք կեղտոտվել, ճմռտվել, նախ-
կին ծանոթները ձանձրացել եյին նրանից, խու-
սափում եյին, բայց նա չեք վիրավորվում, նա
չեք կարող, իրավունք չունեք վիրավորվելու, չե՞
վոր նա այլևս հարուստ չեք, իսկ առանց փողի
մարդը մարդ չեք, այլ մի տեսակ սողուն, վոր
պետք եք շարունակ սողալով հայթայթեք իր սը-
նունդը: Յե՛վ նա սողում եք, ժպտում, շողո-
քորթում, քամավում, վոր չմեռնի:

Յերբ չհաջողվեց նրան ժամանակին արտա-
սահման փախչել, ի հարկե յեթե իմանար, վոր

այստեղ ե հասնելու՝ կըսպաններ իրան, բայց այն-
քան դանդաղ, այնքան աննկատելի յեղով այդ
կերպարանափոխությունը, վոր շնկատեց թե
ինչպես նախկին Ստեպան Խրիստոֆորովիչը
դարձավ այն, վոր կուշ յեկած ծակծկված կա-
տելոկը մինչև ականջները քաշած նստում ե
ժամերով բուլվարում ու այլևս վոչ յերազում,
վոչ մտածում, վոչ ցավում... այլ թմբում արե-
վի տակ և ննջում:

Նա վաղուց ե դադարել ամեն որ սափրվե-
լուց, դեմքի վրա ալեխառը մազերը՝ ինչպես
հնձված արտում՝ ցցվել են կնճիռներից ալոսված
դեմքի վրա:

Նա հիմա շաքաթը մի անգամ հազիվ ե
կարողանում սափրվել, այն ել շուկայում եժա-
նագին, գարշելի հոտով ոճառի փրփուրով:

Իժբախտ եր նա:

Ամեն բան մոռացավ նա, բայց չդավանա-
նեց Փարիզից բերած կատելոկին:

Բոլորը գլխարկները փոխեցին, բայց Ստյո-
պան վոչ:

Նա հրաժարվեց ամեն բանից, նույնիսկ
մարդ լինելուց, բայց իր կատելոկից վոչ. շնա-
յելով, վոր այդ յեցրեմն. շիկ գլխարկից միմի-
այն հիշողություն եր մնացել, և այն ել շատ
վատ հիշողություն եր մնացել:

„Հ Ե Ր Մ Ե Ս“

Հրատարակչության հրատարակություններ

Գ Ե Ղ Ա Ր Վ Ե Ս Տ Ա Կ Ա Ն

- | | |
|---|---------|
| 1. ՄՏ. ԶՈՐՅԱՆ.—Պրտադարանի Ազգիկը | 50 կապ. |
| 2. » » Հեղկոսի նախադահը | 40 » |
| 3. ՄԻՔ. ՄԱՆՎԵԼՅԱՆ.—Ժամանակակից Մելոգրամ | 60 » |
| 4. » » Պործազուլ, պիես | 25 » |
| 5. » » Մի դիտարկի պատմություն | 40 » |
| 6. Գ. ԴԵՄԻՐՉՅԱՆ.—Մանսթներ, ժողովածու | 40 » |
| 7. Վ. ԹՈԹՈՎՆԵՑ.—Ասատուր և Կլեոպատրա | 30 » |

Մ Ա Ն Կ Ա Կ Ա Ն

- | | |
|--|------|
| 8. ՄՏ. ԶՈՐՅԱՆ.—Նլեքարահան Լամպը (պատկերազ.) | 35 » |
| 9. ՅԵՂԻՇԵՆ ԶԱՐԵՆՅ (Փսխագրութ.)—Պիքորի յերազը
դունտարիպ | 75 » |
| 10. ՄԻՔ. ԶԱՐԱՅՅՅԱՆ.—Մարեիրը, բնագրական զրույց
(պատկերազարդ) | 40 » |

Ռ Ի Ս ՈՒ Մ Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

- | | |
|--|------|
| 11. ԹԱԴ. ԱՎԴԱԼԻՅԵՅԱՆ.—Արսեն Թսխմայան | 50 » |
| 12. Г. В. БЕВУТОВ.—Л. Н. Толстой и Хаджи-Мурат | 50 » |
| 13. ԱՄՈՒՍԼՈՒԹՅԱՆ, ԸՆՏԱՆԻՔԻ և ԽՆԱՄԱԿԱԼՈՒ-
ԹՅԱՆ ՆՈՐ ՈՐՆԵՔԸ (ՀԳԽՀ Արդժողո-
մատի մատչելի պարզաբանությունը) | 70 » |

ԳԱՍ Գիճնարար Գիտ. Գրադ.



FL0397486

(104.) 267
128

ԳԻՆԸ 40 ԿՈՊ.



Միկ. Մանվելյան

История одного копелка

Книгоиздательство „Гермес“
Эривань, ул. Маркса, 29.